ՆԱԽԱԳԻԾ

ՀՐԱՄԱՆ

2012 թվականի -ի N 1018 -Ն

ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑԻ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ՁԵՎԸ, ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑԻ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ, ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑԻ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑԻ ՍՏՈՒԳԱՉԱՓՄԱՆ ԴՐՈՇՄԻ ԱՐՏԱՏԻՊԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N142-Ն ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով և «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով և Հայաստանի Հարապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի թիվ 1229-Ն որոշման 2-րդ կետով հաստատված կանոնադրության 13-րդ կետի «դ» ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել՝

1) չափման միջոցի տեսակի հաստատման սերտիֆիկատի ձևը՝ համաձայն N1 հավելվածի,

2) չափման միջոցի տեսակի հաստատման նշանի պատկերը՝ համաձայն N2 հավելվածի,

3) չափման միջոցի տեսակի հաստատման գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N3 հավելվածի,

4) չափման միջոցի ստուգաչափման դրոշմի արտատիպի պատկերները՝ համաձայն N4 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի հարապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2004 թվականի օգոստոսի 24-ի «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի առանձին հոդվածների կիրարկումը ապահովելու մասին» N142-Ն հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

Հավելված №1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2012 թ.------ ----------ի №----- -Ն հրամանի

Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարություն
Չափագիտության ազգային
ինստիտուտ
Չափագիտության ազգային
մարմին

Министерство экономики
Республики Армения
Национальный институт
по метрологии
Национальный орган
по метрологии

The Ministry of
Economy of Republic of Armenia
National Institute of Metrology
National Body of Metrology

ՍԵՐՏԻՖԻԿԱՏ
ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

СЕРТИФИКАТ
ОБ УТВЕРЖДЕНИИ ТИПА СРЕДСТВ ИЗМЕРЕНИЙ

CERTIFICATE
OF PATTERN APPROVAL OF MEASURING INSTRUMENTS

ՍԵՐՏԻՖԻԿԱՏԻ ՀԱՄԱՐԸ
НОМЕР СЕРТИФИКАТА
CERTIFICATE NUMBER
№ _____

Գործում է մինչև « __ » _____ 20 թ.
Действителен до
Valid till

Սույն սերտիֆիկատը հավաստում է, որ պետական փորձարկումների դրական արդյունքների հիման վրա հաստատված է

_____
չափման միջոցի անվանումը

_____ տեսակը,

արտադրված _____
արտադրող երկիրը, ֆիրման

որը գրանցված է չափման միջոցների Պետական գրանցամատյանում № AM _____
տակ և թույլատրված է կիրառման Հայաստանի Հանրապետությունում:
Տեսակի նկարագիրը ներկայացված է սույն սերտիֆիկատի հավելվածում:

Չափագիտության ազգային
մարմնի ղեկավար

_____
ստորագրություն

Կ.Տ

« __ » _____ 20 թ.

Հավելված N2

ՀՀ էկոնոմիկայի նախարարի

2012 թվականի -ի N հրամանի

ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑԻ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆՇԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Հավելված N3

ՀՀ էկոնոմիկայի նախարարի

2012 թվականի -ի N հրամանի

Կ Ա Ր Գ

ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑԻ ՏԵՍԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում արտադրված և ներմուծված տեսակը հաստատված չափման միջոցների գրանցամատյանի վարման հետ կապված հարաբերությունները:

2. Գրանցամատյանում գրանցման ենթակա են այն չափման միջոցները (այսուհետ՝ ՉՄ), որոնք ենթակա են օգտագործման օրենսդրական չափագիտության տարածման ոլորտներում՝ հաստատված ՀՀ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով և որոնց տեսակները հաստավել են փորձարկումների արդյունքների հիման վրա և թույլատրվել են Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ դրվելու համար:

3. ՉՄ-ի գրանցումը և գրանցամատյանի վարումը կատարվում է հետևյալ նպատակներով.

1) տեսակը հաստատված ՉՄ-ի հաշվառման և Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ դրվելու և կիրառման համար թույլատրված ՉՄ-ի մասին տեղեկատվական տվյալների ֆոնդ ստեղծելու համար,

2) շահագրգիռ կազմակերպություններին, տնտեսվարող սուբյեկտներին, ինչպես նաև տեսակի հաստատման փորձարկումների արդյունքների փոխադարձ ճանաչմանը համագործակցող արտասահմանյան երկրների չափագիտական կազմակերպություններին գրանցված ՉՄ-ի մասին տեղեկատվական ֆոնդի տվյալներով տեղեկատվական սպասարկում կազմակերպելու համար :

4. Գրանցամատյանի վարումն իրականացնում է Չափագիտության ազգային մարմինը:

5. Գրանցման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը՝

1) ՉՄ-ի ստուգաչափման կամ եզակի թվով ՉՄ-ի վկայագրման փաստաթուղթը,

2) ՉՄ-ի տեսակի նկարագիրը,

3) ՉՄ-ի փորձարկումների վավերագիրը

4) ՉՄ-ի տեսակի հաստատման մասին սերտիֆիկատի ճանաչման որոշումը տրված արտասահմանյան երկրների չափագիտական կազմակերպությունների կողմից եթե առկա են ՉՄ-ի տեսակի հաստատման մասին փոխճանաչման համապատասխան համաձայնագրեր, կնքված չափման միջոցներ արտադրող–արտահանող երկրի և Հայաստանի Հանրապետության միջև:

6. ՉՄ-ի գրանցամատյանի վարման ընթացքում Չափագիտության ազգային մարմինը իրականացնում է հետևյալ գործառնությունները.

1) ՉՄ-ի հաստատված տեսակների գրանցումը,

2) Չափագիտության ազգային մարմնի կողմից հաստատված և գրանցամատյանում գրանցված ՀՀ-ում շրջանառության մեջ դնելու և կիրառելու համար թույլատրված ՉՄ-ի մասին տեղեկությունների տեղեկատվական ֆոնդի կազմավորումը

3) գրանցամատյանի փաստաթղթերի, ինչպես նաև այն նյութերի պահպանումը, որոնց հիման վրա կատարվում է ՉՄ-ի հաստատված տեսակների գրանցումը,

4) շահագրգիռ կազմակերպություններին սահմանված կարգով գրանցված ՉՄ-ի մասին տեղեկությունների տեղեկատվական ֆոնդի տվյալներով ապահովումը,

5) գրանցամատյանում ժամանակին համապատասխան փոփոխությունների կատարումը,

6) Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) անդամ երկրների միջպետական գրանցամատյանի համար տեղեկատվության նախապատրաստումը:

7. ՉՄ-ի հաստատված տեսակների գրանցումը կատարվում է գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի լրակազմի առկայության դեպքում՝ 5 օրվա ընթացքում:

1) Գրանցման ժամանակ ստուգվում է փաստաթղթերի լրակազմությունը սույն կարգի 4-րդ կետի համապատասխան,

2) ՉՄ-ի հաստատված տեսակների մասին տեղեկությունները գրանցվում են գրանցամատյանում: ՉՄ-ի յուրաքանչյուր տեսակին տրվում է գրանցման համար, որը բաղկացած է գրանցման հերթական համարից և տեսակի հաստատման տարվա վերջին երկու թվանշաններից,

3) գրանցամատյանում գրանցելուց հետո ձևակերպվում է ՉՄ-ի տեսակի հաստատման մասին սերտիֆիկատը 2 օրինակից: Առաջին օրինակը մնում է ՉՄ-ի մասին տեղեկությունների տեղեկատվական ֆոնդում, իսկ երկրորդը հանձնվում է հայտ ներկայացնողին:

8. Գրանցամատյանի տվյալներով տեղեկատվական սպասարկումը.

1) շահագրգիռ կազմակերպությունների, ինչպես նաև փորձարկումների արդյունքների ճանաչմանը համագործակցող արտասահմանյան գործընկերների չափագիտական կազմակերպությունների տեղեկատվական սպասարկումը ՉՄ-ի հաստատված տեսակների մասին տվյալներով՝ իրականացնում է Չափագիտության ազգային մարմինը,

2) ՉՄ-ի հաստատված տեսակների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև գրանցամատյանից դրանց հանման և կիրառման ոլորտների արգելման կամ սահմանափակման մասին ծանուցումը ենթակա է հրապարակման Չափագիտության ազգային մարմնի պաշտոնական կայքում

3) շահագրգիռ կազմակերպությունների հարցումներով, գրանցված ՉՄ-ի մասին տեղեկությունների տեղեկատվական ֆոնդի տվյալների հիման վրա, կարող է տրամադրվել նաև այլ տեսակի տեղեկատվություն:

Հավելված N4

ՀՀ էկոնոմիկայի նախարարի

2012 թվականի -ի N___Ն հրամանի

ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՉԱՓՄԱՆ ԴՐՈՇՄԻ ԱՐՏԱՏԻՊԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

1. Ստուգաչափման դրոշմը (ձև 1) տեխնիկական միջոց է, որը նախատեսված է չափման միջոցի և (կամ) ստուգաչափման անձնագրի վրա դրոշմի արտատիպը դնելու համար, ինչպես նաև հավաստելու չափման միջոցի չափագիտական բնութագրերի համապատասխանությունը սահմանված պահանջներին:

2. Ստուգաչափման դրոշմը պետք է պարունակի՝

1) Հայաստանի Հանրապետության հապավումը՝ ՀՀ,

2) Դրոշմի կիրառման տարեթվի վերջին երկու թվանշանները,

3) Չափագիտության ազգային ինստիտուտի պայմանական ծածկագիրը՝ ՉԻ,

4) Ստուգաչափողի անհատական նշանը:

Անհրաժեշտության դեպքում կարող է նշվել լրացուցիչ տեղեկություն՝ ստուգաչափում կատարելու եռամսյակը կամ ամիսը:

3. Ստուգաչափողի անհատական նշանի համար օգտագործվում են հայկական այբուբենի մեծատառերը, թույլատրվում է նաև օգտագործել փոքրատառեր:

4. Թույլատրվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության դրոշմների վրա դնել նախարարության տարբերանշանը ռուսերեն այբուբենի մեծատառերով՝ «МО»:

5. Եռամսյակները նշվում են հռոմեական թվանշաններով՝ I, II, III և IV:

6. Ստուգաչափման բացասական արդյունքների դեպքում ստուգաչափման դրոշմի արտատիպը մարվում է (ձև 2):

7. Դրոշմների անվանումը և չափերն են.

1) Պողպատյա հարվածային, կլոր, տարեկան, 6 մմ,

2) Պողպատյա հարվածային ձևավոր, տարեկան 3,5 և 6 մմ,

3) Պողպատյա կլոր, տարեկան 8 մմ,

4) Ռետինե կլոր, 18 մմ,

5) Մարման պողպատյա տարեկան 8 մմ,

6) Մարման պողպատյա հարվածային 3,5 և 6 մմ:

8. 3,5 մմ-ոց դրոշմները պետք է պարունակեն՝

1) Հայաստանի Հանրապետության հապավումը - ՀՀ,

2) դրոշմի կիրառման տարեթվի վերջին 2 թվանշանը,

3) ստուգաչափողի անհատական նշանը:

Դրոշմների տրամագծերի նոմինալ չափերը ընտրվում են՝ 1.5; 3.5; 6.0; 8.0; 12.0; 16.0 և 18.0 շարքից:

ՍՏՈՒԳԱՉԱՓՄԱՆ ԴՐՈՇՄԻ ԱՐՏԱՏԻՊԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Չև 1

Ստուգաչափման դրոշմի պատկերը



Ձև 2

Մարման դրոշմի պատկերը